ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

E-mail paraqar.armavir@mta.gov.am
www.parakar.am
Հեռ. 231-6-00-42, 060 530042 1149, գ. Փարաքար, Նաիրի 42

03.02.2014 թ. թիվ 60

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան Աշոտ Սարգսի

ՈՒղարկվում է Փարաքարի գյուղական համանքի ղեկավարի 2014 թվականի հունվար ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 7 թերթ:

Հարգանքով՝

2/3/2014

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

X

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունվարի 2014թվականի N 1-Ա

ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20 - Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Ա.Գևորգյանի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 172-Ա հրամանը. որոշում եմ՝

՝1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 3-Ա որոշմամբ հաստատված NN 5, 13, 16 և 23 հավելվածները ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014 թ. հունվարի 08
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2014թվականի N 2-Ա

ՌԻՏԱ ԱՐՇԱՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 –Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցներն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների կազմում, նույն օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով, 8-րդ ենթակետով և հիմք ընդունելով սեփականատեր Ռիտա Արշամի Կարապետյանի 2014 թվականի հունվարի 23-ի դիմումը. որ ո ր ո շ ու մ ե մ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի Փարաքար գյուղում Ռիտա Արշամի Կարապետյանի /ծնված 31.05.1960 թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը օրինական 0.0606 հա հողամասի և հողամասում կառուցած 129.5 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան և շինությունների նկատմամբ: Սեփականության իրավունք ճանաչել համաձայն հողամասի և շինությունների հատակագծերի՝ տրված 2013 թվականի դեկտեմբերի 25-ին ,,Կարեն Մաչանյան ,, ԱՁ -ի կողմից, ըստ որակավորման թիվ 0244 վկայականի: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:
2. 04-094-0017-0116-0015 կադաստրային համարով բնակելի տանը և հողատարածքին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Գ.Նժդեհի փողոց 10:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի

կադաստրի պետական կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14թ. _հունվարի 30
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

08 հունվարի 2014թվականի N 1-Ա

ԱԼԲԵՐՏ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի առաջին մասի երրորդ կետով և հիմք ընդունելով Փարաքարի համայնքի անասնաբուժ Ալբերտ Զաքարյանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դիմումը. կարգադրում եմ՝

1. Լուծել 2013 թվականի դեկտեմբերի 28-ից Ալբերտ Զաքարյանի հետ կնքված 2007 թվականի մարտի 23-ի թիվ 16 աշխատանքային պայմանագիրը:
2. Ֆինանսական բաժնի պետին (Մ.Մարգարյան)՝ սահմանված կարգով Ալբերտ Զաքարյանի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. հունվարի 8
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

08 հունվարի 2014թվականի N 2-Ա

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավորության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացը կազմակերպելու կարգի 35-րդ կետի պահանջներով. կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/ 22 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով Փարաքարի գյուղական համայնքի աղբահանության կազմակերպման համար սեղմված բնական գազ ձեռք բերելու նպատակով ձևավորել գնահատող հանձնաժողով և հաստատել կազմը՝ համաձայն հավելվածի: .

2. Սույն կարգադրությամբ ձևավորվող գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Վարուժան Քոլյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. հունվարի 08
գ.Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Փարաքարի համայնքի ղեկավարի
2014 թվականի հունվարի 8-ի
թիվ 2 - Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Օհանյան Սարիբեկ - գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ

անդամներ՝ Արտակ Մկրտումյան - ,,Բարեկարգում,, տնօրինության տնօրեն

Վահան Մարգարյան - գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ

Աշխատակազմի քարտուղար՝ Մ.Քեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

08 հունվարի 2014թվականի N 3-Ա

ԲԱԳՐԱՏ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի հինգերորդ մասի երկրորդ պարբերությամբ, Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 38-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Բագրատ Մովսիսյանի 2014 թվականի հունվարի 8-ի դիմումը. կարգադրում եմ՝

1. Բագրատ Մովսեսի Մովսիսյանին `(անձնագիր AN 0704725, տրված 07.11.2013 թվականի 057-ի կողմից, հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ փարաքար Կոմունայի փողոց տուն 11) նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի <<Մշակույթ և սպորտ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր օրենքով սահմանված կարգով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարիետտա Քեյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _հունվարի- 08
գ.Փարաքար